

ԴՐՕՇԽԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՏՄԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Սուլթանի կառավարութիւնը անկարող լինելով բռնի, զէնքի ոյժով խոնարհեցնել ապստամբ Զէյթունը, այժմ եւրոպական պետութիւնների աջակցութեամբ յիսաղաղ միջոցով է ուզում հասնել իւր նենգաւոր նպատակին:

Երկու թշնամիները յհաշտեցնելու համար, եւրոպական պետութիւններն էլ յմիջնորդի գերը իրենց վրայ են առել և արդէն բանակցութիւնները սկսել են:

Զէյթունցիներին առաջարկած սուլթանի պայմաններն են՝—ապստամբների գլխաւորներին յանձնել կառավարութեան, զինաթափ լինել և իրենց քանդած զօրանոցը վերաշինել, որոնց հետ կատարելապէս համաձայն են յմարդասէր ու յմիջնորդ եւրոպական պետութիւնները:

Երբ Մեծ-ոճրագործի մարդասպան սուլը շողշողում էր Հայաստանի գլխին ու անխնայ կոտորածներ անում, և դեռ շարունակում են այդ դժբախտ երկրից արեան գոլորշիներ բարձրանալ, այդ սարսափի ըոպէներին, այսօրայ յմիջնորդները՝ լոկ յհանդիսատեսի գեր կատարեցին: Իսկ այսօր, երբ այդ ոճրագործը անկարող է լինում եղբայրների արեան վրէժխնդիր եղող մի բռուն քաջերին խոնարհեցնել, ճիշտը՝ կոտորել, նրանք, եւրոպական պետութիւնները, շտապում են յմիջնորդ գառնալ, որպէս զի այժմ էլ այդ միջոցով ազատ մընացած մասին ենթարկել տան Մեծ ու Փոքր Հայաստանում ապրող նրանց եղբայրների ճակատագրին: Եթէ ոչ, ինչո՞ւ այն ժամանակ էլ չէին առաջարկում իրենց միջնորդութիւնը՝ առաջն առնելու այն կոտորածների, որոնք պատմութեան հազագիւտ դէպքերիցն են իրենց սարսափով, իրենց հակամարդկային բնաւորութիւնով, ինչո՞ւ չէին հաշտութիւն առաջարկում: Որովհետեւ գիտէին, որ Մեծ-ոճրագործը մեծ դժւարութիւնների չի հանդիպիլ: Ահա՛ դարձեալ և դարձեալ փաստ ու շատ բնորոշ փաստ, որ դիպլոմատիան բարեկամ չէ տանջողների ու թոյլերի, որ նրա համար ոչ մի նշանակութիւն չունին մարդկային զոհերը, որ

նա ղեկավարում է միայն և միայն իւր պետական շահերով: Ահա՛ դարձեալ մի փառաւոր, բայց արիւնով ներկած փունջ, դիպլոմատիայի վրայ յոյս դնողներին, դիպլոմատիական միջոցներով գործողներին:

Եւ դիպլոմատիայ կոչւածը այն աստիճանին հեռու է գնացել, նա իւր անխղճութիւնը ու անամոթութիւնը այն աստիճանի լըբութեան է հասցրել, որ առաջարկում է ոչ միայն զինաթափ լինել, այլ և մինչև իսկ ապստամբների գլխաւորներին յանձնել սուլթանի կառավարութեան: Ի՞նչ, յանձնել ապստամբների գլխաւորներին, մատնել ահաբարոյական հրէշներ:

Ամբողջ ժողովուրդը մարտիրոսացնելուց յետոյ, այսօր էլ ուզում են նրան բարոյապէս մեղցնել, ստորացնել, նրան ուզում են մատնիչ դաւաճան դարձնել:

Զէյթունցիներն մատնիչ, դաւաճան, այն զէյթունցին, որ կարող է մարդկային արժանապատւութեան դասեր տալ Մեծ-ոճրագործի գործակիցներին, այն զէյթունցին, որ արհամարում է մահը և կուրծքն ու ճակատը բաց, հպարտութեամբ դէպի մահ դիմում: ոչ, նա ինչպէս միշտ, այժմ էլ բարձր կը մնայ, նա իւր ճակատին չի՛ կրիլ յդաւաճանի, յմատնիչի՝ կնիքը, նա ոճրագործ չի դառնալ: Ապստամբ լինելով՝ ապստամբ էլ կը մնայ, բռնակալութեան դէմ կուի դրօշակ բարձրացրած լինելով, նա կը կուի, լցած վրէժխնդրական ոգով, վրէժխնդիր կը լինի, նա թոյլ չի տալ իւր եղբոր սպանողը ու իւր ազատութիւնն բռնաբարողը մըտնէ իւր տունը, ոչ. նա կամ թշնամուն կը ջարդի, դուրս կը քշի՝ պահպանելու համար իւր ազատութիւնը և անկախութիւնը, կամ կը մեռնի՝ թողնելով թշնամուն իւր անչնացած դիակը. և թող ոճրագործը, մարդասպանը ու նրա մեղսակիցները զւարճանան ազատութեան համար քաջութեամբ ընկած դիակով...

Բայց հայ ժողովուրդը թոյլ չի տալ, որ Զէյթունն էլ ընկնի, նա նրան օգնութեան կը հասնի:

Կուի՛ և ամեն տեղ, ամեն կէտում:

Եւ հայ ժողովուրդը իբրեւ մի ամբողջութիւն պիտի ոտի կանգնի, ձեռք մեկնի արեան մէջ լողացող, կեանքի և մահւան կուի մղող տաճկահայ եղբայրներին, նրանց սիրտ ու թիկունք տայ:

ՁԷՅԹՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

ԵՐՐՈՊԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻՑ

(ՀԵՌԱԳԻՐՆԵՐ Կ. ՊՈԼՍԻՅ)

31-ին Դեկտ. Դուռը Ձէյթունի մասին պետութիւնների առաջարկածը ընդունեց: Հալէպի օտար հիւպատոսները Ձէյթուն պիտի երթան՝ անձնատրուիւթեան համար բանակցել:

31-ին Դեկտ. «Թայմզին» Պոլսից հաղորդում են՝ թէ Մուստաֆա փաշան՝ Ձէյթունի գունդերի հրամանատարը հրահանգ է խնդրել Դունից, խոստանալով 1 ժաման մէջ ամեն ինչ վերջացնել:

2-ին Յուն. Դուռը ընդունեց Հալէպի օտար հիւպատոսների միջնորդութիւնը՝ Ձէյթունի ապստամբներին հնազանդութեան բերելու համար:

Ձէյթունի ապստամբած հայերը ի պատասխան հիւպատոսների միջնորդութեան առաջարկին, պայման են դնում նաեւ, որ պիտի հետեւ իրենց միջից ընտրւած կառավարիչ ունենան:

9-ին Յուն. Թուրք պաշտօնական աղբիւրները բացէ ի բաց հերքում են մամուլի կողմից հրատարակւած այն լուրը, որով տաճիկ գունդերը Ձէյթունի առջև գաղանթութիւններ են գործ դրել: Նմանապէս հերքում են այն լուրը, թէ թրքական բանակների միջից բազմաթիւ զինւորներ դասալիք են եղել:

15-ին Յուն. Յունւար 10-ի ժողովի մէջ, վեց պետութիւնների ներկայացուցիչները զբաղեցան Ձէյթունի հայ ապստամբների խնդրով: Ֆրանսիայի և Ռուսիայի դեսպանները առաջարկեցին, որ միջնորդութեան բանակցութիւնները Հալէպի մէջ կատարւին, բայց Անգլիոյ դեսպանի պահանջման վրայ որոշուեցաւ, որ նոյն իսկ Ձէյթունի մէջ կատարւին:

Հիւպատոսները հրահանգ են ստացել այս բանակցութիւնների ժամանակ համաձայն Դուան որոշման շարժիլ: Նրանք պէտք է պահանջեն՝ որ ապստամբների գլխաւորները յանձնւին և պիտի ներկայ գտնւին միջնորդութեան պայմանների գործադրման:

Բայց եթէ առաջարկւած պայմանները չընդունւին, հիւպատոսները պէտք է ետ դառնան:

Հիւպատոսները մօտերս պիտի ճանապարհւին:

Յայտնի չէ՝ թէ Ձէյթունի բնակիչները ինչ առաջարկութիւններ պիտի անեն, միայն հաստատ է, որ նրանք պիտի մերժեն յանձնել իրենց զէնքերը և գլուխաւորները:

16-ին Յուն. Կը ծանուցանեն՝ թէ Թուրք գունդերը եղանակի վատութեան պատճառով՝ պարտաւորեցան Մարաշ քաշել:

Նախապատրաստական մի ժողովի համար պիտի Մարաշ գան և Թուրք կառավարութեան ու հայ ապստամբների մէջ միջնորդութեան համար ուղարկւած հիւպատոսները. վաղը, հինգշաբթի կը մեկնին Հալէպից և Ձէյթուն կը հասնին 4-5 օրից:

ԿՈՏՈՐԱԾՆԵՐ

Կ Ա Ր Ի Ն

Կողոպտում են, կոտորում են,
Աւերում են Հայաստան:
Մ. Սաֆարեան

III

Հոկտ. 18-ի օրը սովորականից աւելի շարժում և իրարանցում էր նկատուում զօրքերի և Թուրք ժողովրդի մէջ. այնուամենայնիւ հեռի այն մտքից՝ թէ հենց այդ օրը տեղի պիտի ունենայ մտադրւած ջարդը, որի հրամանը Պոլսից ստացւել էր արդէն, հայերը՝ միամիտ, աներից դուրս էին եկել փողոցները և իւրաքանչիւր դէպքում սովորականին գտնուում էր իւր գործի գլուխը: Կէսօրւան ժամի 12-ին (ը. ե.) հազիւ թէ ուսաց հիւպատոսը վերադարձել էր նահանգապետին և տըխրահողակ Զաքիի փաշային արած սիրալիր այցելութիւնից... հնչեց զինւորական (պայմանական ի հարկէ) փողը և զօրքերին և Թուրք ամբոխին տուեց գործի սկսելու—կոտորելու նշանը: Այլևս կարող էր երեւակայել: Յարձակման առաջին զոհերը եղան կառավարական ապարանքում, արդարութեան դատարանների առջև դեպքերով մի քանի հայեր, որոնց մէջ է եղել և Դվինի գիւղի քահանան: Սպանելով դրանց նոյն իսկ կառավարական ապարանքում, կառավարութիւնը նպատակ է ունեցել ի հարկին հաւատացնելու, թէ հայերը յարձակում են գործել կառավարչական հիմնարկութիւնների վրայ, ուրեմն և սպանւել կուր ընթացքում: Քահանան դեռ երկու օր առաջ լազերի ձեռքից հազիւ ազատել էր կեանքը՝ 4-500 ոսկու հասնող կարողութիւնը ամբողջապէս կողոպուտ տալուց յետոյ: Փողոցներում թափւած զօրքը սկզբում գնդակահարում էր որոշ հեռաւորութեան վրայ, շփոթութիւնը սաստկացնելու համար, բայց հենց որ շարժեց կատաղի ամբոխը, այնուհետև զօրքը մտաւ իւր իսկական դերի մէջ—սպանել պատահող հային՝ մասնաւորապէս հասակով երիտասարդներին, մերկութեան աստիճան նրանց կողոպտելուց յետոյ: Հրացանների որոտումը լսելիս՝ ով ժամանակ է ունենում կամ միջոց, շտապում է փախուստ տալ դէպի տուն, բայց իւրաքանչիւր քայլի վրայ պատահում զինւորների և ընկնում գնդակահար. իսկ ով ժամանակ չի գտնում՝ յանկարծակնութեան մէջ, մրտնդում է իւր խնութի կամ մակաղնի մի խորշը և

ապաստում չարաշուք մահան: Մի կողմից կատաղի հրա-
ցանաձգութեան տակ, անշնչացած դիակների կոյտեր
դիզում էին փողոցներում, միւս կողմից զօրք և ամբոխ
զբաղած էին թալանելով բաց մնացած այն խանութ-
ները և մակաղինները, որոնք պատկանում էին հայե-
րին: Յոյները կառավարութեան առանձին պաշտպա-
նութիւնը վայելեցին և դրա համար էլ ոչինչ մնաս
չկրեցին: Շատ մակաղինների և կասսաների փակ դռ-
ները բանալու համար, ամբոխը դիմում էր զօրքի օգ-
նութեան, որը հրացանի մի քանի հարւածով իսկոյն
բաց էր անում կողպէքը: Բաւական է, որ մէկը մար-
թինի 6-7 հարւածների տակ ընկնում էր անշունչ,
կատաղի թուրք ամբոխը՝ զինւած հրացաններով, փայ-
տերով և այլն, ամենանողկալի անարգանքների էր են-
թարկում դիակներին: Սուբաշիդուլէի թուրքերը
մի քանի հայերի կախել են սպանդանոցներում, մոր-
թել և քերթել են ոչխարների պէս: Ոմանք միամտա-
բար, կարծելով, որ զօրքը խաղաղութիւնը վերականգ-
նելու և անգէն ժողովրդին պաշտպանելու պաշտօն ու-
նի, իրանց յանձնել են զինւորների պաշտպանութեան,
ամեն բանից կողոպտել և դարձեալ սպանել: Այս-
պիսիներից է ի միջի այլոց յայտնի վաճառական և
քաղաքային ժողովի անդամ Յարութիւն Ֆէրմա-
նեանը, որը ընտանիքին օգնութեան հասնելու հա-
մար, դուրս է գալիս իւր ապահով ապաստանարանից,
հաւատում զինւորներին, որոնք նրան տանում են ուղ-
ղակի պահականոց և նրա առջև թալանելուց յետոյ,
սպանում չարաչար: Մէկը՝ դերձակ Ալէքսան, 46
ոսկի տալիս է մի հարկւրապետի՝ կեանքը ազատելու
համար, բայց դարձեալ սպանում է սրտաձմիկ մա-
հով: Վաճառական և ուսումնական ժողովի անդամ
Գօնդակճեան Արմենակին նոյնպէս սպանում են
զինւորները հենց իւր տանը առաջ և անխնայ կտրա-
տում ձեռքերը: Կանանատները պատմում են այն զօ-
րեղ դիմադրութեան մասին, որը ցոյց է տւել Գօնդակ-
ճեան երկար ժամանակ ընկալելի ձեռքին: Հայերից
չատերի մօտ գտնւել են ատրճանակներ. և ով դիմել
է ինքնապաշտպանութեան, պատահել է զինւորների
կողմից ամենազօրեղ յարձակման և կարճատե դիմա-
դրութիւնից յետոյ սպանւել քաջաբար:—Ի՛նչ անի ա-
տրճանակով զինւած մի մարդ՝ տասնեակ զինւորների և
խուժամուժ ամբոխի հետ: Շատ մարդիկ զեռ ևս բա-
րեբաղութիւն չեն ունեցել գնդակահար լինելու, մահ-
ւան յետին ճգնաժամը համեմատաբար մեղմութեամբ
անցկացնելու համար. այդպիսիներին՝ մանաւանդ գէն-
քով դիմադրողներին, մորթել են ոչխարի պէս իրանց
մակաղինների կամ խանութների առջև. շատերից մե-
կին՝ կօշկակար հաճի Ստեփանի ամենաեղբերական
մահը կարնեցիների յիշողութիւնից չի հեռանալ յաւի-
տեան: Մի խումբ մարդկանց էլ տասնեակ վերքեր տա-
լուց և սպանելուց յետոյ, դիակների վրայ նաւթ են
ածել և այրել՝ դիւական քրքիջներ արձակելով: Ի մի-
ջի այլոց՝ այդպիսի անարգանքի ենթարկւել են Իսու-
ֆեան Գարեգին, Ղալէմբէրեան Կարապետ, Քիրիշճեան
Պօղոս, Տիւզեան Ստեփան և այլն: Դէպքին յաջորդող
օրը ով ներկայ գտնւէր հայոց գերեզմանատանը՝ ակա-
նատես կը լինէր այն սրտաձմիկ տեսարանին, որը երկ-
րորդ անգամը լինելով՝ պարզում էր կարնեցիների ա-
չաց առջև: Հարկւրաւոր արիւնաչաղախ, բոլորովին մերկ

և այլանդակութեան աստիճանի հասցրած դիակներ մե-
կը միւսի մօտ փռւած էին բաց տարածութեան վրայ,
որտեղ թափւած էր արտասուքների մէջ հառաչող
թշուա հայերի բազմութիւնը, ճանաչելու դիակներին
և գտնելու իւրաքանչիւրը իւր հարազատին: Կոտորածի
գիշերը համարեա՛ ոչ դք չէր կարողացել հասնել իւր
տունը, այլ որտեղ կարողացել էր՝ ապաստանած մնա-
ցել էր. մինչև 2-3 օր հազիւ կարողանում էր մէկը
գտնել իւր ընտանիքի անդամներին:

Ն Ա Մ Ա Կ Տ Ր Ա Պ Ի Զ Ո Ն Ի Յ

Տրապիզոնի շրջակայ հայ գիւղերը առհասարակ ան-
տառուտ ըլլալով՝ բնակիչները լաւ դիրք կարողացան
բռնել, այնպէս որ կորուստներն աւելի նիւթական ե-
ղան: Ցածիկները քիչ դժարութեամբ յաջողեցան տը-
ներն այրել և տեղ տեղ ալ սպանել անգէնները. հըր-
դեհւած տուները 900-է աւելի են: Աւելորդ է ըսել,
թէ ժողովուրդը որքան նեղութիւն կը քաշէր վաշխա-
ռուներէն ու կառավարութեան գրած ծանր հարկերէն:
Շատերը կարծես սիրով կուգէին իրենց վարած դառն
կեանքին՝ և է կերպով վերջ տալ. կը չարչարէին
ու կը տառապէին, բայց կերեւար, թէ յոյսն և ընտա-
նեկան սէրն էր զիրենք այնպէս երկար ապրեցնողը:

Սուլթանի պետութիւնը միշտ վատ աչքով կը նայէր
արդէն ասոնց վրայ և կը ջանար, որ դպրոցներ ալ չու-
նենան: Կրնա՞ր չատել, երբ գիտէր թէ քաղաքացիք ա-
սոնց հետ իբր եղբայր կը վարւէին: Հետեւաբար
իրեն աւերիչ սիստեմը կը պահանջէր գիւղերն ալ կոր-
ծանել և դրնել այնպիսի վիճակի մը մէջ, որ հայերն
բնաւ չը կարողանան այլ ևս իրար օգնել. և որպէս զի
այս ամեն նպատակներն առաջ տարւի՝ սուլթանական
բռնապետութիւնը զինւեցաւ ամենակեղտոտ դաւաճա-
նութիւններով, խարդախութիւնը իր պատնէշը հա-
մարեց «ամեն պարագայի մէջ» ու այնպէս չարութեան
սկսաւ:

Հիմայ գիւղացիներուն թէև մեծ մասը ողջ՝ սակայն
իրենցմէ չեն հեռանար սովի, ցուրտի և զանազան տառա-
պանաց մահառիթ հարւածներն, որոնք քաղցը մահով
պիտի փակեն աչերը ազատութիւնը սիրողին: Կմախք դար-
ձած քաղաքացին իր օգնութիւններն քանի մ' անգամ
չուշացուց, սակայն դարձեալ հրոսակներ հանւեցան կա-
րօտեալներու վրայ, որոնք զարնելով՝ եղած չեղածը թա-
լանեցին-ըսելով. «կեալուրներ, վերստին դուք ձեզի կը
շտկէ՞ք»:

Զեֆանոզ գիւղը, որ 70 տուն ունէր, 5 բնակարան-
ներէ զատ, մնացած բոլորն ալ կրակի ճարակ եղան:
Բնակիչներուն մեծ մասը Ս. Փրկիչ վանքը ապաստանե-
ցաւ, փոքրամասնութիւն մ' ալ գիւղին մէջ գէն ի ձեռին
ինքնապաշտպանութեան դիմեց: Պարիան, իր բոլորտի-
քով 48 տուն, մեծ մասը այրւեցաւ ու բոլոր տներն
թալանւեցան. տեղացիք նոյնպէս վանքը քաշւեցան, ան-
ձերնին փրկելու համար: Կոսովլա 38 տուն ունեցող
գիւղի վարի մասի տները, չորս հատէ զատ, բոլորն ալ

մոխիր եղան, թալանեցան. — վերին մասի ապրողները աւելի ամուր տեղեր քաշելով, իրենք զիրենք պաշտպանեցին, բայց բոլոր տուններին վառեցաւ. երեք տուն միայն ազատ մնաց: Ծերունի Տէր Յովհաննէս Մալեան քահանան հրացաններով գնդակահար ընելէ վերջ՝ դանակով ալ մարմինը կտոր կտոր ըրին. նոյնպէս Գրիգոր Սարգսեան 90 տարեկան ծերունիը ու անգամաւոյժ Յովակիմ Զիւքիարեան 45 տարեկան անձը հրացանով սպանեցին:

Միւլէթիայի բոլոր տներն այրւեցան. տեղացիք Ս. Փրկիչ վանքը հաւաքւած էին: Ապիսն և Սէֆթէր 60 տնւոր գիւղերէն մէկ քանին միայն բոցերու մատնեցան. իսկ մարդիկ իրենց տղոցմով անտառներէն իրենք զիրենք քաջութեամբ պաշտպանեցին նախնական զէնքերով:

Սիւրմէնէի 70 տուն հայերը՝ 1500-է աւելի զինւորներէ և լեռնաշրջիկ աւազակներէ պաշարւելով՝ 24 ժամ շարունակ կուեցան և անձատուր չեղան. վերջապէս տաճիկները յուսահատւած, թողուցին անցան Բաբերդի գիւղերու վրայ: Հոն առանց խնայելու, անզէններուն ամեն վայրենութիւններ ընելէ յետոյ, կրակի ու սուրի մատնեցին մանկութիւնն ու կանայքը:

Ս. Փրկիչ վանքը ժողովւած էին 350 այր մարդիկ, իրենց ընտանիքներով. ասոնք երկու անգամ տաճիկներէն յարձակում կրեցին, բայց չպարտուեցան: Վերջապէս կառավարութիւնը իր միացեալ ոյժերով վրանին քալեց և առաջարկեց անձատուր ըլլալ: Գիւղացիք տեսան, որ իրենց ոյժէն վեր էր դիմադրել և ռազմաւորներ քալ չըկար, ըսին՝ «Եթէ ձեր կրօնքին վրայ կերպով ու կը խոստանաք՝ թէ մեզմէ բնաւ մէկը չպիտի ձերբակալէք, կը թո՛ղ նք, որ ներս մտնէք»: Կառավարութիւնը համակերպեցաւ. ներս մտնելով՝ սկսաւ խուզարկել ասդին, անդին — վանքին աշտարակին մէկ մասը, որ հնութիւն մըն էր, քանդեց, տաճարին սեղանը կործանեց, ձեղունները քայքայեց և վերջապէս շատ մը կարասիքներ ջարդ ու փշուր ըրաւ: Վերադարձին վանքին կալածներէն քէմէնչէճիին տունը այրեցին, զինքն ալ սպանելով՝ ձեռնունայն հեռացան. հայերն ալ երբ իրենց տեղերը վերադարձան, աւերակներ միայն գտան:

Տիվրանոյ և Մինասլի գիւղերու տանց մեծ մասը այրեցին և մնացածներն ալ բոլորը թալանեցին. Տէր Մաղաքեա քահանան քահանան, Պօղոս Վարդանեան և Յովակիմ Յովսէփեան սպանուեցան:

Բլաթանա աւանին եկեղեցւոյ թաղի հայերն հալածանքներէ և կողոպուտներէ ստիպուեցան արտասահման անցնել:

Սեպտեմբեր 25-ին Կալանիմայի անցքի մօտ երկու անգէն գիւղացիներ սպանուեցան:

Լաղանա 43 տնւոր գիւղացիք անտառներն քաշելով, թէև կորուստ չունեցան, բայց տներնին բոլորը այրուեցան և ունեցածներն թալանեցին:

Իլանա գիւղը՝ Մեղրիկոց թաղի երկու տներն քանդելով, միւսներն բոլորը աւարի առին:

Կապարօնի բոլոր տներն այրուեցան երկու հատէ զատ. տեղացիք նոյնպէս անտառներու շնորհիւ կեանքերնին ազատեցին:

Թարախճիի բոլոր տներն մոխիր դարձան. նշանաւոր հովիւ Սիմառնեանի բոլոր արջառներն և Մալա գիւղը թողուցած 600 ոչխարներն յափշտակեցին:

Սէրա ձորի արևելեան կողմէ Ծիֆրիկա գիւղի 36 տներն հրոյ մատնեցան: Նոյնպէս ասոր մօտ եղող Իլէ գիւղը:

Վերանա 85 տնով զուտ հայաբնակ և մօտակայ Աղբի գիւղերը հրոյ ճարակ դարձան: Թուրքերն ամենէն առաջ Տէր Մաղաթեա Տէրտէրեան քահանան վատութեամբ ձեռք անցնելով՝ սպանեցին: Այն տները, զորս չաւերեցին, արդիւնք են տեղական բէկերու կամ աղաներու շահագիտական զանազան միտումներու:

Այս գիւղացիներ, որ միշտ քաղաք կիջնէին, չէ՛ գիտցած որոշ կերպով՝ թէ որքա՞ն կորուստ տւած են. հարկւրաւորներ անհետացած են. արդեօք մեռա՞ն, պահած են, յայտնի չէ՛:

Գեռ ուրիշ շատ տեղեր աւելի կամ պակաս աւերուեցան կատարւած են՝ զորս թւել շատ երկար կըլլայ: Զանց կառնենք հոս զետեղել տեղի ունեցած առևանգութիւններն և տաճիկ կառավարութեան զինւորական և քաղաքական պաշտօնեաներու աներևակայի լրբութիւնները: Անապահովութիւնը, որ ատեն մը կը տիրէր, շուտով արեան ու կրակի փոխուեցաւ:

Ա՛լ օգնութեան չենք կարօտիր, մահ՛ը սիրելի մահ՛ը, թո՛ղ միայն մեզ մօտենայ. այն ժամանակ մենք վարձատրւած կըլլանք՝ երբ արշալոյսին մեր որբերը կարենան անո՛ւշ Ազատութիւնը երգել:

ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԸ

Զափազանցութիւն չէ՛, երբ ըսի՝ թէ սեպտ. 25-ի սուլթանական կամքի կատարումէ վերջ, գրեթէ բոլոր հայերը ձերբակալուելով՝ բանտարկուեցան: Ամեն ալ հարցուփորձեցան ամենախայտառակ միջոցներով: — Պաշտօնեաներու բերաններէն իբր կոյանոցէ աղտոտ բառեր դուրս կը թափէր. երեւոյթ մը, որ Տաճկահայաստանի մէջ ապրողն իսկ հազիւ կրնայ երևակայել:

Պոտրածէն 4-5 օր վերջ՝ խուժանը ունենալով իր մէջ ծպտւած ոստիկաններ, կուգէր անգէն բանտարկեալներն ալ ջարդել. բայց ինչպէս որ է կառավարութիւնը առանց զսպողական միջոցներու ետ կեցուց:

Ա՛լ իրեն միակ փափագը կը մնար գտնել յեղափոխականներուն մնացորդ գլխաւորներն: — Շատերն չարչարեց, ծեծել տուաւ. բայց բան մը դուրս չը փրկուաւ:

Վերջապէս ճարահատ սկսաւ խուժա խուժա արձակել կամ արձակածները կրկին բանտել. մէկ խօսքով, խելակորոյս գազանի մը ամեն կերպերը իւրացուց:

Սուտ ամբաստանագրեր ալ ստեղծեց, որպէս զի անոնցմով կարենայ կործանել մէկ քանի արդարասէր անձինք ալ: Հիմա աներեսաբար ուզած ձեռով պատրաստւած գրութիւններ կը ներկայացնէ բանտարկեալներուն և կուգէ ճնշմանց տակ ստորագրել տալ, որք, սակայն, գրեթէ միշտ կը մերժւին:

Գիշեր ցերեկ անդադար կը հարցուփորձեն, և ամեն հայէ կը պահանջեն ըսել երկու տէրրորիստ տղայոց պահած տեղը կամ թէ յեղափոխականներուն, որոնք լինելը... և ուրիշ այնպիսի ձեռով քննութիւններ, զորս ամօթ կը համարւի գրել:

Ի՞նչ աշխարհ... հիմա բանտին մէջ կը մնան իրաւաբան Յարութիւն Շահրիկեան, Յօքթօր Էնշէրեան, մեծահարուստ ծերուկ հաճի Մարտիրոս Արապեան, Մանուկ և Ստեփան Թաթոսեան եղբայրներ, դպրոցական պաշտօնեաներ և ուրիշներ մօտ 60 հոգի, որոնց գոյութենէն կը կասկածուի...

1895 Նոյեմ. 13-ին (հ. տ.) քաղաքիս տաճիկներն պատրաստեցան այս անգամ յոյներու վրայ յարձակել. ասոնք խանութներն գոցելով՝ հիւպատոսներուն դիմեցին. — Ի՞նչ ընելին չեն գիտեր: Քանի որ ճիւղ սուլթանը դեռ չէ սատկած՝ քրիստոնէից կեանքը բարակ թելէ մը կախած պիտի ըլլայ:

Ն Ա Մ Ա Կ Պ Ո Ւ Ս Ի Ց

Պոլսի մէջ ամեն ուրբաթ լուր կը տարածուի, որ թուրք յեղափոխականները սուլթանը գահէն կը պիտի ընեն, ամեն մարդ անհամբեր փոթորիկի պայծառմէն կսպասէ ու կսպասէ, ուրիշ ոչինչ. երէկ գործը պիտի վերջացնեն եղեր, բայց յորդառատ անձրեւին պատճառով յետաձգւեր է. տեսնենք, Ասուած յաջողութիւն տայ: Թուրք յեղափոխականներու մասին գաղափար կազմելու համար բաւական է, որ գիտնաք, թէ անոնք, ցաւօք սրտի, անկարող են նոյն իսկ յայտարարութիւններ կանոնաւորապէս ցրելը մայրաքաղաքիս մէջ. փողոցներու մէջ կոյտերով ձգած էին, որպէս զի պատահմամբ առնեն կարգան:

Ազգասէր պոլսեցիք շատ փափագող են, որ ամեն բան կատարուի, միայն իրենցմէ ո՛ր և է զոհողութիւն, դրամ կամ աշխատութիւն չպահանջուի: Հայաստանի թշուառներուն համար զգեստ կը պատրաստեն. չեմ՝ յուսար, որ յաջողին, գոնէ մէկ երկու հազար հոգի հագուեցնել, թէեւ արդէն շատ ուշ մնացած են. մինչև ասոնց հասնելը՝ գարունն եկած ու ամեն բան յոյժ տխուր կերպով կրնայ վերջանալ: Պոլսեցիին կուզէ այդպիսով իր համբաւը շինել. չեն մտածեր երբէք, որ ներկայ րոպէին ոչինչ չարժէք իրենց ըրածը, չեն ըմբռնած, որ հիմա զենքով պատերազմը միայն օգտակար է հայութեան ու պէտք է բոլոր ուժով անոր նպաստել. ծաւալի է տեսնել յեղափոխական գործիչ անունը կրողներ ալ, որոնք զգեստ հաւաքելով կգտնուին:

Երբ Պոլսի հասան Ձէյթունի ապստամբութեան ու նախնական յաջողութեան լուրերը, ամենքս ալ ուրախացանք, բայց շատ քիչերու միտքէն անցաւ օգնել այդ շարժման՝ թէեւ բոլորս ալ լաւ կը հասկնայինք անոր կենսական կարեւորութիւնը. հիմա երբ կսկսի բռնութիւն ծայրը երեւիլ, յուսահատութիւնը կը տիրէ ու լալը կսկսի: Ստոյգ աղբիւրէ կիմանանք, որ դեսպաններու մէջ Ձէյթունի ընտանիքներուն օգնելու խորհուրդ կայ. ի՞նչ կը նշանակէ այս, մարդ չգիտեր. ոմանք կը կարծեն, որ Ձէյթունն արդէն աւրած ու կործանւած ըլլալով, մնացած թշուառներուն օգնելու համար է խորհուրդը:

Պատրիարքարանի շուրջը օրւան խնդիր եղած է օրացոյցին խնդիրը: Պատրիարքն իսպառ մերժած էր հրա-

տարակել տալ կրթական նախարարութեան սրբագրած օրացոյցը, ուր ջնջւած էին «Արքարու թագաւորին մեծութիւնը» և «Արքանանց զօրավարաց մեծութիւնը» նման սողերը: Յանկարծ ուրկէ ուր ս. Փրկչի Հիւանդանոցի հոգաբարձութեան գործակալներէն մէկը՝ Գառնիկ Հիւնքեարպէյէտեան, իբր թէ այդ հաստատութեան նըպաստ մը ընելու փափագով, տպարանապետ Պաղտատլեանի հետ կը համաձայնի և հրապարակ կը հանէ նորօրինակ օրացոյց մը, ուր միայն երկուշաբթին, երեքշաբթին իրարու կը յաջորդեն, առանց որ և է տօնական ծանօթութեան: Պատրիարքը կը զայրանայ և բացատրութիւն կը պահանջէ. Ս. Փրկչի հոգաբարձութիւն անտեղեակ կը ցուցնէ ինքզինքը. մեղքը կը ծանրանայ խեղճ Գառնիկին վրայ. չգիտենք ինչպէս պիտի վերջանայ այս գործը. պախարակելի է միայն տեսնել պատրիարքարանին ենթարկւած վարչական մարմիններու այդ պախարակելի ընթացքը, այս ընդհանուր տագնապի միջոցին: Իրենց այդ ուղղութեամբ՝ այդ պարոնները ստիպմամբ պիտի հրաւիրեն յեղափոխականներու միջամտութիւնը և այդ մանր գործերուն մէջ:

Ազգրեան պատրիարքի խելքը նոր է գլուխն եկեր, թերեւս Վիլիկիոյ անանական կաթողիկոս ըլլալուն համար: Հայաստանի ջարդերն անուղղակի կերպով քաջալերելէ վերջ, այժմ կուզէ չարիքը դարմանել ու բարձրացնել իր ու կաթողիկոսութեան անունը հայերուն առջև: Կարմիր Խաչի ընկերութեան դիմում ըրած է, որ օգնեն հայերուն և կրսի թէ յաջողեր է: Նաև Անգլիոյ դեսպանին խորհուրդ տւած է վեց պետութիւններէն մէկ մէկ ներկայացուցիչ կարգել տալ, որոնք Ձէյթուն երթալով՝ ապստամբները հանդարդեցնեն ու թուրքը չէզոքացնելով, իրենք ստանձնեն այդ գաւառին վարչութիւնը. իբրեւ թէ Անգլիոյ դեսպանը հաւանքեր ու խոստացեր է միւս դեսպաններն ալ համոզել. խորհուրդին բարի:

Այսպէս թէ այնպէս, խնդիրը մարել կուզեն ու մաս մը հայեր ալ կը նպաստեն այս բանին. ուրիշ ի՞նչ կրնանք ըսել, երբ հայը չուզեր քաջալերել յաղթանակով սկսւած ապստամբութիւնը՝ չուզեր քաջալերել զենքը ձեռքին անմեղ արիւններու հատուցում պահանջող անձնէրները. հայերու մեծամասնութիւնը վախնալ ու լալ միայն գիտէ, գոնէ, Պոլսի մէջ: Ուր են այն կատաղի գէմբերը, որ կերեւան ուրիշ ազգերու մէջ այսպիսի տագնապալից օրերու մէջ: Հայր, մայր, ընտանիք և ունեցած չունեցածը կորուսած հայը ինչո՞ւ այլ ևս կը դանդաղի, կը վարանի անվեհեր նետուիլ մահու և կեանքի պայքարին մէջ, ուրկէ ժողովուրդներու ապագան կը ծնի...

Կուիւր սրբազան է և մեռնողները նահատակ են:

Արի՛՛ Կէյի ձեռքով սուլթանը Ռուսիոյ կայսեր ազամանդազարդ տուփեր և ուրիշ ընծաներ ղրկած է. «Մօնիդէօն Օրեանդալ» լրագիրը այս բանը գրելուն համար փակեցաւ:

ԲԱՐԵՐՏԻ ԳԻՒՂԵՐԻ ԱԻԵՐՈՒՄԸ

Որչափ որ սուլթանին այս տարւոյ ուղարկած շրջիկ քարոզողներն յաջողած էին յայտնի սուտերու միջոցաւ մոլեռանդ միւսիւմաններու ուղեղն գրգռել հայոց դէմ ու արդէն լարւած յարաբերութիւններն բոլորովին վատացնել, այսու հանդերձ մեր կողմէն դժւար էր յուսալ, թէ իսլամական խառն դժեր շղթայաւճճ յանդըգնին աշխարհի առջև բացարձակապէս և անաժօթաբար ամեն կերպ չարիք գործել։— Գա երևակայել պէտք է։

Հոկտ. 1-էն սկսեալ Տրապիզոնի մօտերէն՝ Եօմու-րայի Սիւրմէնէի և Նիւմիշխանէի շրջակայ գիւղերու տաճիկներէն եկած ահագին բազմութիւն մը, խումբ խումբ բաժանւած սկսան քալել մեր գիւղերու վրայ, բոլորն ալ գրեթէ պետական հրացաններով զինւած։ Ասոնց հետ տեղացի ստոր կրօնակիցնին ալ միանալով՝ մոլեգնաբար խուժեցին հայ մշակներու վրայ։ Գտածնին առանց խնայելու գնդակահարելէ վերջ, վերաւորեալներն ու մեռեալներն կացինով կամ սուրով սկսան կտոր կտոր ընել, հայ հոյանքներու տարաւի տակ։ Այսքան բարբարոսները չէին բաւեր, վրայ հասան Զէքի փաշային Երզնկայէն ղրկած զինուորներուն քանի մը գունդերը, որոնք գալով՝ իսկոյն այս ահաբեկ անգթութեանց աւելի լայն ծաւալ տւին։ Արիւնը սկսաւ առատաբար ոռոգել արտերն ու դաշտերն, այն տեղերն, ուր հայ մշակն շարք մը դարերէ ի վեր կը տքար ու քրտինք կը թափէր սուլթանեանները սնուցանելով, ոչ տուն մնաց, ոչ եկեղեցի, ոչ վանք և ոչ այլ ինչ։ ամեն ինչ աւերեցին տարամտաբար, շատ մը խաբէութիւններով ձեռք բերած քահանաներն ու երկրագործներն չարաչար սպանեցին, զլուխներն սրերով կտրելով։ Ալ ինչ ըսեմ, այդ ձերմակ փաթաթած նենգամիտ ու գարշելի գլուխներէն ինչ բան որ դուրս եկաւ գործադրեցաւ։ Ո՛հ, զգելի արարածներ, զորս աստ պատմել կոպտութիւն և մարդկային պարկեշտութեան դէմ լուտանք կը համարիմ։

Վարդահան գիւղն, որ 115 տունէ կը բաղկանար, հազիւ 6 մարդ կարողացան կեանքերնին ազատել։

Երկեցիք ունեցած զէնքերնին ձեռք առնելով՝ մեծ քաջութեամբ չորս օր շարունակ կուեցան։ Տաճիկներն երեք անգամ յարձակում գործելով՝ ետ մղեցան։ Զորորդ անգամին 5000 հոգւոյ սուար բազմութիւն մը դարձեալ յարձակեցաւ։ Զինուորներու ու խուժանի դէմ կուրծք տուող և առաջնորդող Զակոբ Գրիգորեան, Ոճկէան Խաչատուրեան, Սահակ Մեքեսեան, Յովակիմ Ուստա-Սիմօնեան, Առաքել Սիւքիսեան և այլ շատ մը կտրիճ երիտասարդներ, կուեցան արիաբար, մինչև որ ռազմամթերքնին հատուցին և ապա ինկան։

Լուսհոնք գիւղն վրայ նախ 200 հրացանաւոր գնացին։ 40 հայեր դէմերնին ելնելով, ամուր կերպով զերեք եւտ կը մղեն. պահ մը վերջ թշնամին եռապատուած կրկին կուգայ։ Այս անգամ մերոնք յուսահատ կուի մը մղելէ վերջ, տեսան որ ալ մթերքնին հատաւ, տեղի տւին՝ անտառներն քաշելով. թէև գիւղը ուրիշ տեղաց պէս գերեզման դարձաւ, ինչպէս և մօտակայ ս. Լուսաւորիչ վանքն աւերակի փոխեցաւ։

Պալախօռ, Ռուշտիք գիւղերն թէև ուրիշ մի քանի

գիւղացիներու պէս մահմեդականութիւնը ընդունեցին ճնշման տակ, սակայն Զէքիի զինուորներն ասոնց ամենը ի մի հաւաքելով՝ գլուխնին մէկիկ մէկիկ կտրտեցին կացինով։

Ղօփուզ, Քսանթա և այլ գիւղեր, որք թէև պատրաստականութիւն ունէին դիմադրելու, բայց կառավարութիւնը ու պաշտպանութեան պատգամաւորներ ղրկելով երգանցան, որ եթէ զէնքերնին յանձնեն՝ իրենց բնաւ փնաս մը պիտի չըլլայ և կը յաջողին։ Սակայն հայերն խաբելէ վերջ, կրակի ու սուրի մատնելով՝ զոհ կերթան խուժանին մոլեգնութեանց ու վայրագ կրքերուն։ Շատ խղճալի էր քսանթացի հայուհեաց ինքնասպանութիւններն. ամենը մէկ մէկ դառն մէջոցներու դիմեցին և շատեր մեծ ջրհորներու մէջ ինքզինքնին նետուով՝ խեղդամահ եղան։ Ս. Քրիստափոր մեծ վանքըն ալ աւարի առնելէ վերջ՝ եկեղեցին շուտով մզկիթի փոխեցին։

Ո՞ր մէկը կարելի է նշանակել, ամեն հայ իրարմէ թշառ, ամեն տան շէմք սրբապղծւած ու արեամբ ներկւած։ Բոլոր գիւղերն կը ներկայացնեն իբր մոխրի կոյտեր, արտերն ու դաշտերն ամայացած, խոտի ու երգի գեղեցիկ դէզերն ալ չեն երևար... Ամեն դի սև սուգ ու տխրութիւն... մէկ կողմէն կրօնափոխներ գըլ՝ խիկոր կանցնին՝ արեւուն նայել իսկ ամաչելով, միւս կողմէն ալ բոբիկ, մերկ, անօթի թշառուհիներ իրենց գրկի մանկանց հետ ցնխերու մէջ կը դեգերին։—Մո՛ւթ է աշխարհն իրենց համար... ցուրտին, քամիին ու կարկուտին հարւածներու տակ կը հեծեն ու կը հառաջեն՝ ողբալով անցեալն ու ներկան։

—Այս ընդհանուր խառնակութեան միջոցին, ամբողջ Բաբերտի գիւղերու մէջ զոհաւորներու թիւը որոշել դժւար է, բայց միջին հաշուով կենթադրուի իբր 2500 հոգի, որոց 100-ին 10 իգական սեռէ են։ Իսկ ողջ ու կորած հայուհիներ շատ կան։ Այժմ ով որ աչքի առջև կապրի, խեղճ ու օգնութեան կարօտ է, ի՞նչ ընէ, կրնայ մուրալ զիրենք կողոպտող ու իր սիրելիներն մահացնող գազաններէն։ Ո՛հ, ի՞նչ անբնական իրակաւ մահացնող գազաններէն։ Ո՛հ, ի՞նչ անբնական իրակաւ նուութիւն։ Տներն բան մը մնացած չէ. այն ամենը, որ չեն կարողացած տանել, ոչնչացուցած են։ Բնակարան չկայ, գրեթէ ամենն ալ այրւած կամ քանդուած, բնաւ պէտքի մը չեն ծառայեր։ Ապրողներ կը նախանձին ամենաշատ հալածւող անասունի կեանքին իսկ, ինչու որ զուրկ են ինքնապաշտպանութեան ամեն միջոցներէ։— Զառ դաշտեցին մինչև հիմա արիւն ու քրտինքը յղուշով մարմնացուցած, տարւէ տարի միլիոններ կուղարկէր սուլթանի սնտուկին։ Վթան կով մըն էր, սնուցանող գայլերու ձագերն։— Զգաց իր ողորմելի լինելը և իր կուրծքին մէջ ծնած ապստամբական ոգին դեռ նոր քայլ կառնէր,— վրայ հասաւ իր կեղեքիչը. առաջ զէնքը թշնամիին ձեռքն էր, իրեն բաժին կը մնար լոկ մահ։— Նոր հասկացած էին՝ թէ ասանկ բարբարոս երկրի մը մէջ, իրենց դաւանած աւետարանը զէնքով միայն կապրի...

Ինչ որ է.— մեռնողը միշտ բռնութիւնն է. արիւնը մեղ չըվախեցներ։

Ահա շարք մը աւերակ գիւղեր, որք լիբ Սուլթան Համիդին թագաւորութեան արդար կնիքը կը կրեն...

Թ Ա Լ Ա Ն Ի Ա Ծ Ե Ի Կ Ո Ր Ծ Ա Ն Ի Ա Ծ Գ Ի Ի Ղ Ե Ր Ն

Գ Ի Ի Ղ Ե Ր Ո Ւ Ա Ն Ո Ւ Ն Ն Ե Ր Ն	Տ Ո Ւ Ն	Ե Կ Ե Ղ Ե Ց Ի	Չ Ո Ր Ո Շ (1 չոր. 6 կողէ)	Ո Չ Խ Ա Ր	Կ Ո Վ	Չ Ի	Մ Ե Ղ Ր Ի Փ Ե Թ Ա Կ	Տ Ա Ս Ա Ն Ո Ր Դ Ի Տ Ո Ւ Ր Ք	Գ Ի Ի Ղ Ե Ր
Էրկի	56	2	60	1300	100	20	250	25 Հազար	Ոչնչացած
Քսանթա	200	2	150	1750	600	50	800	45 "	"
Պալախոռ	90	2	80	1500	200	40	400	30 "	Կրօնափոխ եղած և ապա զարնւած են.
Լուսհոնք	130	2	75	2250	400	20	500	40 "	Ոչնչացած.
Քարաւերակ	150	2	125	1250	600	30	300	60 "	Ամայացած.
Բլուրակ	65	1	40	1050	375	20	270	30 "	Ոչնչացած.
Ռուշտի	28	1	25	200	100	10	140	20 "	Կրօնափոխ եղած.
Ս. Թորոս	62	1	40	870	140	8	160	25 "	" "
Օձղեղ	30	1	20	400	170	5	70	15 "	Ոչնչացած.
Վերի Քրդի	30	1	20	350	120	5	70	15 "	"
Վարի Քրդի	20	—	12	270	80	3	54	10 "	"
Թոմնան	37	1	33	300	190	8	80	20 "	"
Նիւ	50	1	36	250	175	—	100	12 "	Կրօնափոխ եղած.
Փնղերկան	15	1	13	140	75	3	80	8 "	Ոչնչացած.
Վարզահան	115	2	55	275	300	5	320	30 "	"
Խայէկ	50	2	45	450	275	10	395	30 "	Կրօնափոխ եղած.
Մալանսա	60	1	35	1200	500	10	400	15 "	Ոչնչացած.
Էվերէկ կամ Աւերակ	82	2	65	800	300	10	300	17 "	"
Ուրուսիշ	30	1	24	700	200	5	300	8 "	"
Ալմշկա	20	1	20	150	175	3	200	5 "	"
Կիւ	43	1	45	1250	300	—	400	10 "	"
Չահմանց	55	1	35	1000	400	5	400	10 "	"
Խօփուղ	80	1	60	1300	300	—	600	35 "	Կէսը աւերւած.
Առիւծկա	30	1	30	400	190	—	500	20 "	Ամայացած.
Հինտէ	63	2	65	650	350	—	150	30 "	Ոչնչացած.
Բլուր	112	1	70	1250	420	—	130	40 "	"
Սարաճուղ	10	1	13	350	85	—	80	10 "	"
Խանձաւերակ	12	—	10	270	80	—	60	10 "	"
Քիստիսի	5	—	6	180	60	—	40	3 "	"
Սղըճի	30	1	22	400	170	3	85	15 "	"
30	1760	36	1329	22507	7430	273	7334	643000	

Մ 2

Գ Ր Օ Շ Ա Կ

Ա Յ Ն Թ Ա Պ Ի Յ

Այնթապի դէպքի մասին հետեւեալ դրոշմ տեղեկութիւններն առնաւ են: Կոտորածն սկսած է նոյեմ. 16 (հ. տ.) առաւօտեան և տեւած է երեք օր շարունակ. սպանաւորներուն թիւն է 3-400 կամ ըստ ոմանց 800-1000, և նոյնչափ վիրաւորեալ. այրւած են 300-400 տներ մեծ մասամբ աղքատներու, բոլոր շուկան կողոպտւած է, մերկութիւնն և անօթութիւնը մի խօսքով խեղճութիւնն աննկարագրելի է. պաշտպանւած են մասամբ մը այն տները, որոնք թաղային մեծ դռներ ունին. ողջ մնացած բոլոր աչքի զարնող անձնաւորութիւնները բանտարկւած և խիստ հսկողութեան ենթարկւած են. յարաբերութիւնները խզւած են, ոչ միայն դրսի, այլ և նոյն իսկ դրկից տներու հետ. թըքերէն ոմանք խղճահարւելով այսպիսի զարհուրելի կոտորածի մը ազդեցութենէն և կամ ուրիշ հաշիւներէ առաջնորդւելով՝ աշխատած են մասամբ մը առջևն առնել, բայց չեն յաջողած:

Վ Ա Ն Ի Յ

Մենք հոս չենք կրնար տունէն դուրս ելնել, եթէ համարձակենք, անմիջական վտանգը պատրաստ է. հիմա հարուստ ու աղքատ մէկ են, բոլոր արմախքնիս ոչնչացաւ. մեր նախնիքներու տնկած ծառաստանները այսօրայ համար էին՝ ապրուստ չունենալով ծառերու կանաչները կուտենք և կտրտելով թաց թաց կը վառենք: Գիշերով երեք եղբայրներ տարին Կարապետին փողոցին մէջ կախեցին. պատճառը հարցնողներուն կը պատասխանէին՝ թէ հայտէ կեալուրներ, մեր թագաւորին հրամանն այս է, պէտք է կատարենք, որ արքայութիւն երթանք: Գիշեր ատեն Սճեան Յարութիւնին տունը կողոպտեցին ու զինքն ալ սպանեցին: Խեղճին քոյրը, հէգ Սաթիւնիկը բռնութեամբ քաշեցին տարին, ուր, սակայն չենք գիտեր:

Ք Է Մ Ա Խ Ի Թ Ա Վ Կ Ն Ե Ր Գ Ի Ի Ղ Ի Յ

Մենք ամեն վայրկեան մեռեալներուց կրսենք, որ դուք ելէք գերեզմաններէն մենք պառկենք, այնքան անտանելի դարձած է մեր կացութիւնը: Մեր քաշածները աննկարագրելի են, արիւն արցունքը միայն կարող է բացատրել մեր տառապանքը: Քիւրդերն եկան նախ ոչխարներուն մէկ մասը տարին ու երկու մարդ սպանեցին, երկրորդ անգամ գալով՝ մնացած ոչխարներն ու ամբողջ գիւղը կողոպտեցին: Կառավարութիւնը փոխանակ որ և է օգնութիւն հասցնելու, մեր անձին պաշտպանութեան միակ միջոցն եղող քանի մը հին զէնքերն ալ բռնեց հաւաքեց ու մեզ թողնով բոլորովին անօգնական բարբարոսներու գազանութիւններուն մասնեց: Այնուհետեւ եկան քիւրդերու դրացի թուրքերը և սկսաւ գիւղի վրայ սաստիկ հրացանաձգութիւն մը, որ անընդհատ բաւական երկար շարունակւեցաւ. մենք ստիպւեցանք թողուլ գիւղն ու հեռանալ,

երեսի վրայ ձգելով անպաշտպան կիներն ու մանուկները: Միւս բոլոր հայ գիւղերն ալ նոյն վիճակն ունեցան. բոլորը թալանեցան, ոչ անկողին և ոչ հագուստ մնաց. այս բոլորը կատարւեցան օր ցերեկով, կառավարական պաշտօնեաներու աչքին առջև:

Ինչպէս մեզ գրում են, մի ինչ որ պարոն, կամ ինչպէս նամակագիրն է անւանում՝ մի «արտիստ», մի բանախօսութեան ժամանակ յանդգնել է Բահրի և Ֆէրիք փաշաների վիրաւորող դաշնակցական ահաբեկիչներին անւանել «բառիս բուն նշանակութեամբ սրիկայ»: Սրիկայ են անւանում այն հերոսները, ժողովուրդի այն քաջ զաւակները, որոնք, արհամարհելով ամեն վտանգ, տանջանք, սարսափ ու մահ, հերոսաբար, օրը ցերեկով, ճակատ առ ճակատ գնդակ են արձակում՝ պատժելու սուլթանի բարձր պաշտօնեաներին, հայ ժողովրդին այնքան չարաբաններն ու տանջանքներ պատճառողին, երիտասարդ կեանքեր բանտերում մաշեցնողին ու մահացնողին, գիւղեր ու աւաններ աւերողին, որը իւր այդ աւերող թաթը հասցրել էր մինչև Պարսկական սահմանները, մտել էր Դերեկ ու Սալմաստի հայաբնակ գիւղերը, և վերջապէս որը, երիտասարդ Մանուկ Շատուրեանին կախաղան հանեց, յեղափոխականներին սարսափեցնելու համար: Այսպիսի մի հրէշին պատժողներին «սրիկայ» են անւանում: Սրիկայ են անւանում ժողովրդի այն հերոս զաւակներին, որոնցով միայն կարելի է ոգևորւել և նրանց անձնազոհութեան ու կատարած գործի առջև գլուխ խոնարհեցնել. գործ, որ իւր տեսակով եզակի է մեր յեղափոխական կեանքի մէջ: Առաջի անգամ է, որ մի հայ և այն էլ դարերով ստրկացած հայը յանդգնութիւն է ունենում փաշաների վրայ գնդակ արձակել՝ մահով պատժել: Եւ փոխանակ այսպիսի անձնազոհների ակնածութեամբ վերաբերւելու, պարծենալու նրանցով ու նրանց արած գործով, նրանք ամենակեղտոտ ու լիբր կերպով հայհուլում են: Ի՞նչ անուն տալ նրանց... յետ դարձնել արտասանած խօսքերը, քիչ է, ուստի և թողնում ենք ժողովրդի դատաստանին:

Մեզ կը մնայ ցաւել, որ այս արտասուքի և արեան լողակում ստիպւում ենք անձնազոհների պատիւ պաշտպանել, թէև նրանց հայհուլողներին արհամարհել անգամ պատիւ է, բայց այդ մենք արինք, որովհետև այդ խօսքերը ծափահարւել է «ուսանողներից», որոնց մեզ կը մնայ միայն խղճալ...

Թիւրիմացութիւնների տեղիք չտալու համար, ստիպւած ենք մեր նոր հասցէն դարձնել «ԱՐՄԷՆ-ԳԱՍՊԱՐ» որի վրայ հրաւիրում ենք առանձին ուշադրութիւն: Խմբագրութեան հետ թղթակցողներից խնդրում է բացառապէս դիմել այդ նոր հասցեով:

Դաշնակցութեան անձանթներից խնդրում է թղթակցութեան եւ նւիրատուութեան համար դիմել:

Armène-Gaspar, poste restante, Carouge (Suisse).

L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.

Վիեննա, Դաշնակցութեան ազատ տպարան: